ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԽՈՒՄԲԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

10.12.2018 19:03

Հայաստանի Հանրապետությունում արտահերթ խորհրդարանական ընտրության կապակցությամբ քաղաքացիներին իրավական օգնության տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատում գործել է արագ արձագանքման խումբ:

Դեռևս դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատն այդ մասին հաղորդագրությամբ հանդես էր եկել: Տեղեկությունը լայնորեն տարածվել էր թե՛ էլեկտրոնային լրատվամիջոցներում և թե՛ քվեարկության օրը հեռուստաընկերություններից մի քանիսի եթերներում:

Այս օրերի ընթացքում արագ արձագանքման խմբին դիմել է թվով 23 քաղաքացի: Քաղաքացիները դիմել են հիմնականում հաշվառման վայրից տարբերվող հասցեում, ստացիոնար բուժման հաստատությունում ընտրություն կատարելու հնարավորության, ինչպես նաև ընտրական կարգի վերաբերյալ հարցերով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })